Կարծիք

ԻԳ.00.02- «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար **Անժելա Սուրենի Մնացականյանի «ՀՀ արտաքին ռազմական քաղաքականությունն անվտանգության ապահովման համատեքստում»** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Անժելա Մնացականյանի ատենախոսության թեման արդիական է, որովհետև Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականությունն ազգային անվտանգության ապահովմանը ուղղված գործունեության անհրաժեշտ տարրն է, ինչն հրատապ է դարձնում թեմայի շուրջ գիտական ուսումնասիրությունների իրականացումը: Ժամանակակից միջազգային քաղաքական գործընթացներում արդիական է **արտաքին ռազմական քաղաքականության** հիմնախնդրի ուսումնասիրության ինչպես գիտական այնպես էլ մեթոդաբանական ասպեկտները: Պետք է նկատի ունենալ նաև, որ արտաքին ռազմական քաղաքականության և ռազմական անվտանգության ապահովման համակարգում կարևոր դեր է հատկացվում դիվանագիտությանը, որի առաջնահերթ խնդիրն է ստեղծել արտաքին բարենպաստ պայմաններ՝ նվազագույն ուժերով երկրի պաշտպանությունն ապահովելու համար՝ ունենալով հնարավորինս շատ դաշնակիցներ և քիչ հավանական հակառակորդներ:

Ատենախոսության նպատակները՝ գիտական են: Ատենախոսը գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրել է արտաքին ռազմական քաղաքականության ինստիտուցիոնալացման գործընթացի հիմքերը, քննության ենթարկել արտաքին ռազմական քաղաքականության առանձնահատկությունները ՀՀ անվտանգության համակարգում և գիտահետազոտական հենքով գնահատել արտաքին ռազմական քաղաքականության հայեցակարգային ձեռքբերումները: Հարուստ աղբյուրագիտական հենքի վրա հեղինակը վերլուծել է արտաքին ռազմական քաղաքականության ժամանակակից ընկալումները և մեկնաբանման հիմնական մոտեցումները, առանձնացրել երկկողմ և բազմակողմ ռազմական համագործակցության գործառույթները՝ տարածաշրջանային անվտանգության

ամրապնդման գործում: Համակողմանի հետազոտական աշխատանքները հնարավորություն են տվել գիտական կտրվածքով գնահատել ՀՀ արտաքին ռազմական քաղաքականության հայեցակարգային ուղենիշերը, ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության և միջազգային ռազմական կառույցների համագործակցության ձևաչափերը և վերլուծել դրանց նշանակությունը՝ ՀՀ անվտանգության ապահովման գործում:

Արժևորում ենք այն հանգամանքը, որ առանձնացվել է արտաքին ռազմական քաղաքականության դերը պետության քաղաքական համակարգում, որտեղ արտաքին ռազմական քաղաքականությունը հանդես է գալիս, որպես պետական քաղաքականության բաղադրիչ և նախորոշվում է պետության քաղաքական կուրսի նպատակներով, հնարավորություններով, հանդես է գալիս, որպես վերջինիս գործիք ու հենք, իսկ երբեմն, նաև որպես հակակշիռ ուժ: Հեղինակի գիտական նորույթների մեջ առանձնահատուկ նշվում է Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության այն բաղադրիչը, որով վերջինիս ապահովման համար առաջնային են ոչ միայն արտաքին, այլ նաև ներքին ռազմական քաղաքականության ուղղությունները: Հայաստանի Հանրապետության արտաքին ռազմական քաղաքականության կատարելագործման տեսլականի համատեքստում, գիտատեսական մոտեցմամբ հետազոտվել ու գնահատվել են պաշտպանության կազմակերպման կառուցակարգերի վերափոխումները, ինչպես նաև իրականացվել է ՀՀ արտաքին ռազմական քաղաքականության հիմնախնդիրների բաղադրիչի համապարփակ ու ամբողջական վերլուծություն: Քաղաքագիտական հետազոտության հարթության մեջ կարևորվել է ռազմական դիվանագիտության դերն արտաքին ռազմական քաղաքականությունում, որպես միջազգային երկկողմ և բազմակողմ համագործակցությունը հաստատող գործիք:

Ատենախոսության մեջ ներառվել են նաև տարածաշրջանային հիմնախնդիրները: Տարածաշրջանի երկրների հետ ռազմական համագործակցությունը ուսումնասիրելիս հիմնավորվել է վերջիներիս հետ ռազմական կապերի զարգացման անհրաժեշտությունը՝ մատնանշվելով այդ համագործակցության ուղղությունները:

Հետազոտությունն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք, օգտագործվել են արտաքին ռազմական քաղաքականության տեսական հիմքերն ու հիմնական սկզբունքները: Դրա զարգացման էվոլյուցիայի ուսումնասիրման նպատակով օգտագործվել են պետական պաշտոնական այլ կառույցների կողմից ընդունված/հրապարակված փաստաթղթերը:

Հետազոտության գիտական նորույթը հստակորեն ձևակերպված է առանձին դրույթներով, որոնք ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն: Հայաստանի արտաքին ռազմական քաղաքականության առանձնահատկությունները լուսաբանվել են արտաքին կառավարման մոդելների տեսանկյունից: Էմպիրիկ ուսումնասիրության արդյունքները զուգորդելով սեփական վերլուծության հետ՝ առանձնացվել են նաև Հայաստանի հարաբերությունների զարգացման հիմնական միտումներն ու հեռանկարները:

Ատենախոսության եզրահանգումները գիտական են և բավականին արժեքավոր Հայաստանի քաղաքական գիտությունների համար: Ատենախոսական աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքներով հեղինակը հանգել է այն եզրակացության, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ռազմական քաղաքականությունը որոշ դեպքերում դուրս է գալիս զուտ ռազմական ոլորտի շրջանակներից և ընդգրկում է պետության գործունեության մյուս բնագավառները: Ատենախոսության բոլոր հատվածում առկա են թարմ և արժանահավատ գնահատականներ և համեմատություններ:

Ատենախոսությունում առկա են նաև մի շարք թերություններ.

1. Հեղինակը ձևակերպում է Հայաստանի Հանրապետության արտաքին ռազմական քաղաքականության գերխնդիրը, ըստ որի այն «ռազմական անվտանգության խնդիրները ամբողջությամբ լուծելն է, գործընկեր ու տարածաշրջանային երկրների և միջազգային ռազմական կենտրոնների հետ ռազմական համագործակցության խորացմամբ բացառել տարածաշրջանային և միջազգային զարգացումներում Հայաստանի մեկուսացումը»: Իհարկե համաձայն ենք սրա հետ, բայց հետո նշում է նաև, որ անհրաժեշտ է ապահովել հակառակորդի զինված ուժերի նկատմամբ ՀՀ զինված ուժերի գերազանցությունը /նաև էջ 152/: Եթե նկատի ունենանք, որ Հայաստանի

ուղղակի հակառակորդ/թշնամի տանդեմը Թուրքիա/Ադրբեջան տանդեմն է, ուղղակիորեն լրիվ անհասկանալի է դառնում որ ՀՀ զինված ուժերի գերազանցությունն տվյալ պարագայում արդեն միստիկական ձևակերպում է:

2. Սահմանվում /էջ 42/ ռազմական դիվանագիտություն հասկացությունը: Կարելի այն ընդունելի համարել, բայց ցանկալի կլիներ տեսնել Պաշտպանության և Արտաքին գործերի նախարարությունների գերատեսչական կարծիքը, որպես փորձաքննություն ապացույց:
3. Ատենախոսության 24 – րդ էջում և եզրակացության մեջ հեղինակը, Սինգապուրի օրինակը բերում է որպես փոքր պետությունների ռազմական քաղաքականության լավագույն օրինակ: Մեր կարծիքով աշխարհաքաղաքական և ռազմավարական միջավայրը և կոնֆլիկտոգեն շրջապատը նկատի ունենալով այս օրինակը տեղին չէ և համեմատելի չէ:
4. Ատենախոսության 1.2 ենթագլուխը, որը նվիրված է ռազմական անվտանգության ապահովման հիմնադրույթներին, պարզ նկարագրական շաջադրանք է և օգտակար չէ արտաքին ռազմական քաղաքականության թեմայի բացահայտման համար:
5. Երբեմն հանդիպում են անհարկի և անօգտակար հատվածներ, օրինակ էջ 43-ում ոմն մի բրիտանացի լրագրողի միտքը, ասված 2020 թ. պատերազմի ժամանակ մշակութային դիվանագիտության մասին:
6. Արցախյան երկրորդ պատերազմը և ներկա պայթունավտանգ իրավիճակը վկայում են, որ մեծ հաշվով Հայաստանը տապալել է իր արտաքին ռազմական և անվտանգային քաղաքականությունը: Սա թերևս ապացուցման կարիք չունի: Այնինչ ատենախոսության ողջ շարադրանքի մեծ մասը ըստ էության դրական է գնահատում այդ քաղաքականությունը:
7. 3.2 ենթագլուխը նվիրված է հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններին: Այստեղ կատարված ուսումնասիրությունը հնարավորություն չի տալիս պատկերացնել կա արդյոք նման հարաբերություններ, թե դրանք մնացել են թղթի վրա: Այս ենթագլխում առկա է նաև շեղում հարցադրումից, խոսվում է ռուս վրացական հարաբերությունների, թուրք ադրբեջանական համագործակցության մասին և այլն:

Որպես պաշտոնական ընդդիմախոս գտնում եմ, որ **Անժելա Սուրենի Մնացականյանի «ՀՀ արտաքին ռազմական քաղաքականությունն անվտանգության ապահովման համատեքստում»** թեմայով՝ ԻԳ.00.02- «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր / Գ. Մ. Քեոյան

Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Մ.Քեոյանի ստորագրությունը հաստատում եմ ԵՊՀ գիտական քարտուղար

Մ. Վ. Հովհաննիսյան

Բանասիրական գիտ. թեկնածու

«13» «02» 2023 թ.